


Հաստատված է  
Խաչատուր Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի  
գիտական խորհրդի 2015թ. մարտի 31-ի նիստում  
Գիտական խորհրդի նախագահ



Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի 2015-2020թթ. միջազգայնացման քաղաքականությունն ու  
ռազմավարությունը

## 1. Ներածություն

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ) միջազգայնացումը նախատեսում է դասավանդման, ուսուցման ու հետազոտական գործընթացներում հասարակությանը տրամադրվող ծառայություններում միջազգային և միջմշակութային ուղղվածությունների ապահովում: Միջազգայնացման ուղղվածության զարգացման համար խթան են հանդիսացել միջազգային և ազգային մակարդակներում իրականացվող մի շարք գործընթացներ և բարեփոխումներ:

Միջազգային համատեքստ. 1998 թ. Բոլոնիայի գործընթացը սկիզբ դրեց բարձրագույն կրթության համակարգի համաեվրոպական բարեփոխումներին: Բարեփոխումները մի շարք եվրոպական երկրներում ունեին բարելավման միտումներ, իսկ որոշ երկրներում և, մասնավորապես, ԱՊՀ երկրներում՝ վերակառուցման: Այս գործընթացները և զլոբալիզացիան առաջ բերեցին համալսարանների միջազգայնացմանը նպաստող հանգամանքներ: Բուհերի համար

ստեղծվեցին համապատասխան նախադրյալներ հանդես գալու համալսարանական միջազգայնացման խնդիրների վերհանման և լուծման ծրագրերով՝ Եվրոպական մակարդակում համադրելի կրթական ծառայությունների առաջարկով, հետազոտության որակի բարձրացմամբ և նորարարությունների ներդրմամբ: 2009 թ. Եվրոպական նախարարների Լյովեն և Լյուվեն-լա-Նյուվո կոմյունիկեով նախարարները ընդունեցին մինչև 2020թ. Բոլոնիայի գործընթացի գործողությունների հիմնական ուղղությունները, որտեղ մասնավորապես այդ ուղղությամբ նախատեսվում է ապահովել կայուն զարգացումը, շարունակել միջազգայնացումը և գլոբալ համագործակցությունը, խթանել ուսանողների, նոր հետազոտողների և անձնակազմի շարժունությունը՝ ծրագրերի և հետազոտության որակը բարձրացնելու, անձնային զարգացման, միջմշակութային հաղորդակցության համար: Վերոնշյալ կոմյունիկեով Բոլոնիայի գործընթացին միացած երկրների նախարարները պարտավորվեցին մինչև 2020 թ., Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի շրջանավարտների նվազագույնը 20 տոկոսը ապահովել արտասահմանում դասընթացով կամ վերապատրաստմամբ:

**Ազգային համատեքստ.** 2005 թ. Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ), միանալով Բոլոնիայի գործընթացին, նոր երանգ տվեց ՀՀ բարձրագույն կրթական բարեփոխումներին: Այսօր այս գլոբալ համագործակցությունը՝ կրթական համակարգերի համադրելիության, ուսանողների և դասախոսական կազմի շարժունության, միջմշակութային երկխոսության ապահովման շուրջ, դարձել է բոլոր բուհերի կարևորագույն խնդիրներից մեկը: ՀՀ-ում այդ ուղղությամբ բազմաթիվ աշխատանքներ են տարվում թե՛ ազգային և թե՛ հաստատութենական մակարդակներում: Հայաստանի կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը սահմանում է միջազգային և տարածաշրջանային համագործակցությունը և հայապահպանությունը որպես Հայաստանի կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունք: Համակարգված միջազգային ներգրավվածությունը օրհասական է նաև համալսարանի ռազմավարական խնդիրների լուծման համար:

Այսօր, միջազգային համագործակցությունը դարձել է հիմնասյուն՝ գաղափարների փոխանակման, նոր գիտելիքի զարգացման, բարձրորակ կրթության տրամադրման և հետազոտության իրականացման համար: ՀՊՄՀ-ի ռազմավարական խնդիրների լուծման համար, այն առավելապես կարևորվում է նաև աշխարհասփյուռ հայության կոնսոլիդացման, հայկական մշակույթի, մանկավարժական ավանդույթների, կրթական ազգային առաձնահատկությունների, գիտելիքների և փորձի փոխանակման նպատակով համապատասխան ծրագրերի և միջոցառումների իրականացման համար: Ընդհանուր առմամբ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ օտարերկրյա ուսանողների քանակը 2005-2010 թթ. Ժամանակահատվածում նվազել է մոտ 45 %-ով: Հայաստան գալիս են սովորելու մասնավորապես Վրաստանից, Ռուսաստանից և Իրանից: Այսպես, 2010 թ. Դրությամբ Հայաստանում սովորող ընդհանուր օտարերկրացիների 25 %-ը եղել են Ռուսաստանից, 33% -ը՝ Վրաստանից, 23%-ը՝ Իրանից: ՀՊՄՀ-ում 2012 թ. դրությամբ սովորում էր 238 օտարերկրյա ուսանող, որոնց մեծամասնությունը կազմում են Վրաստանից հայկական Սփյուռքի ներկայացուցիչները (91 %): Մնացյալ 9%-ը ՌԴ-ից, Ուկրաինայից, Ռումինիայից, ԱՄՆ-ից և Լիբանանից եկած ուսանողներ են: ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների փոքրաքանակության պատճառները տարբեր են և պայմանավորված են անբավարար մարքեթինգային միջոցառումներով, ֆինանսավորման ոչ ճկուն և անբավարար մեխանիզմներով, ուսուցման ճկուն և այլընտրանքային ուղիների բացակայությամբ: Համապատասխան որակներով ուսանողներ ներգրավելու նպատակով ՀՊՄՀ-ն կարևորում է օտար լեզուներով որոշ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման գործընթացը: Հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները և բարձրագույն կրթական համակարգի զարգացման համանման ուղիները՝ ծրագրերը մասնավորապես պետք է ուղղված լինեն ԱՊՀ երկրներից ուսանողներին գրավելուն: Նմանատիպ թիրախային խմբի ընտրությունը պայմանավորված է ևս մի քանի առավելություններով՝

– Համանման մշակութային և պատմական անցյալ

– Փոխադարձ հաղորդակցման և ըմբռնման հնարավորություն տվող (ռուսերեն) լեզվի կիրառելիություն

– Ընդհանուր կրթական տարածաշրջանի առկայություն

–Տարածաշրջանային համանման սոցիալ-քաղաքական զարգացումները

–Դյուրին հարմարվողականություն՝ համանման սոցիալ-մշակութային նախադրյալների առկայության պայմաններում:

Հայաստանյան ուսանողները արտասահման են մեկնում բարձրագույն կրթական համակարգում սովորելու հիմնականում հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus, Ամերիկյան պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող Muskie, Գերմանիայի Դաշնության կողմից ֆինանսավորվող DAAD, Նիդերլանդների կողմից ֆինանսավորվող ծրագրերի և միջպետական ու միջբուհական պայմանագրերի շրջանակներում: Ներկայումս ՀՊՄՀ-ն համագործակցում է մի շարք ԱՊՀ, եվրոպական համալսարանների հետ: Սակայն, պայմանագրերի շրջանակներում իրականացվում են հիմնականում համատեղ հոդվածների տպագրություն, դասախոսական փորձառության փոխանակում: ՀՊՄՀ-ն 2011-2012 թթ. սկսել է ուսանողների արժունության խրախուսման նոր քաղաքականություն և ապահովել մի քանի ուսանողների արտասահմանում կարճատև ուսումնառություն: Հիմնական խոչընդոտները արտասահմանում սովորելու համար հանդիսանում են ուսանողների ոչ բավարար տեղեկացվածությունը, լեզվական խնդիրները, որոշակի հմտությունների բացակայությունը, անբավարար ֆինանսավորման աղբյուրները և այլն: Այդ ուղղությամբ կարևոր է ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության բաժնի ակտիվ ներգրավվածությունը և նախաձեռնողականությունը վերոնշյալ խնդիրների հաղթահարման և բարելավման համար:

Մույն փաստաթուղթը նկարագրում և սահմանում է ՀՊՄՀ ընդհանուր տեսլականը, նպատակները, խնդիրները և դրանց իրականացմանն ուղղված հիմնական գործողությունները՝ համահամալսարանական գործունեության միջազգայնացման վերաբերյալ: Այն բխում է ՀՊՄՀ-ի ռազմավարությունից (հայեցակարգ և զարգացման ծրագիր) (այսուհետ՝ ռազմավարություն): 2015-2020 թթ. ՀՊՄՀ միջազգայնացման քաղաքականությունը և ռազմավարությունը ենթադրում է համալսարանի գործունեության բոլոր բնագավառներում միջազգային ուղղվածության ապահովում, միջազգային համագործակցության խթանում, ուսանողների և դասախոսների համար բազմամշակութային միջավայրի, ուսանողներին սատարող ծառայությունների և այնպիսի կրթության ապահովում, որը կպատրաստի ՀՊՄՀ-ի ուսանողներին հարափոփոխ սոցիալական և տնտեսական միջավայրերին:

**2. ՀՊՄՀ-ի միջազգայնացման հիմնական և կարևորագույն նպատակն է**

բարելավել կրթական ծառայությունների և հետազոտության որակը, բարելավել համալսարանի մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել համալսարանի շրջանավարտների պահանջարկվածությունը և մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում:

Ըստ ՀՊՄՀ-ի ռազմավարության **ՀՊՄՀ-ի հեռանկարներից է** համալսարանի միջազգայնացման և մրցակցության ապահովման առաջնահերթությունը, իջազգային ճանաչման և հեղինակության բարձրացումը: Ռազմավարական խնդիրների լուծմամբ ՀՊՄՀ-ն ԱՊՀ և Եվրոպայի մի շարք համագործակից երկրներում կդառնա ճանաչելի ապրանքանիշ՝ որպես կրթության և ուսուցիչների պատրաստման հայաստանյան առաջատար բուհ:

3. ՀՊՄՀ-ն, հիմքը նդունելով իր ռազմավարական ուղղությունները և մասնավորապես՝ համալսարանի կառավարման համակարգի օպտիմալացումը, կրթական գործունեության արդիականացումը, գիտական և նորարարական գործունեության զարգացումը, մտավոր գործունեության արդյունքների փոխանցումը և առաջանցիկ կրթական պրակտիկաների տարածումը, կադրային ներուժի և սոցիալական համագործակցության զարգացումը, հետագա հինգ տարիների ընթացքում իր գործունեությունը կուղղի հետևյալ խնդիրների լուծմանը՝ 1. Կրթական ծրագրերում միջազգային ուղղվածության ապահովում,

2. Ամառային դպրոցների և վերապատրաստումների կազմակերպում՝ ուղղված թե՛ օտարերկրյա, և թե՛ սփյուռքահայ ուսանողներին,

3. Համալսարանական անձնակազմի և ուսանողների շարժունության ապահովում,

4. Հետազոտության միջազգայնացում,

5. Համագործակցային ցանցերի ստեղծում՝ թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակներում,

6. Համալսարանական անձնակազմին միջազգայնացման խնդիրների լուծմանը մասնակցելու և բուհական միջազգայնացումը խթանելու հարցում աջակցություն,

7. Նպաստել միջազգայնացման կառավարման գործընթացի բարելավմանը:

## **Նպատակ 1. Բարելավել ՀՊՄՀ-ի կրթական ծառայությունների և հետազոտության որակը**

Խնդիր 1.1՝ Կրթական ծրագրերում միջազգային ուղղվածության ապահովում

1.1.1 Շարունակել արդեն իսկ որդեգրած ավանդույթը ու միջազգայնացման միտումները, ստեղծել համապատասխան միջազգային միջավայր՝ հրավիրված

մասնագետների դասախոսությունների, ինչպես նաև գիտաժողովների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների կազմակերպման միջոցով,

1.1.2 Պատրաստել մասնագիտության կրթական ծրագրեր՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով և առաջարկել համապատասխան թիրախային խմբերին, ընդ որում՝ այդ ծրագրերը պետք է ունենան նույն որակական պահանջները, ինչպիսիք են հայերենով դասավանդվող ծրագրերը,

1.1.3 Մշակել օտարերկրյա ուսանողներին աջակցության ծրագրեր՝ ՀՊՄՀ-ում ուսումը բարձր որակով իրականացնելու համար,

1.1.4 Մշակել եվրոպական և/կամ ԱՊՀ երկրների համալսարանների հետ համատեղ ծրագրեր՝ կրկնակի աստիճանաշնորհման հնարավորություններով,

1.1.5 Մշակել օտարերկրյա ուսանողներին վերաբերող համապատասխան փաստաթղթեր և ընթացակարգեր (ուսանողների իրավունքներ, ուսանողական աջակցություն և խորհրդատվություն և այլն.)

1.1.6 Մշակել և ներդնել օտարերկրյա ուսանողներին առաջարկվող կրթական ծառայությունների որակի բարելավման մեխանիզմներ:

Խնդիր 1.2 Հետազոտության միջազգայնացում

1.2.1 Հավաքագրել և ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների միջև տարածել տեղեկատվություն գործող ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ,

1.2.2 Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ միջազգային հետազոտական ծրագրերում ներգրավման, միջազգային պարբերականներում հոդվածների տպագրության վերաբերյալ,

1.2.3 ԱՊՀ երկրների համալսարանների հետ գործող համագործակցային պայմանագրերի շրջանակներում կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ տարածաշրջանային, միջմշակութային, համատեղ հետաքրքրության, ազգային փոքրամասնություններին վերաբերող խնդիրներ վերհանելու, ուսումնասիրելու և արդյունքները գործնականում կիրառելու նպատակով,

1.2.4 Փնտրել ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ օտարերկրյա երկրների հետազոտական համալսարանների և կենտրոնների հետ համագործակցելու նպատակով,

1.2.5 Աջակցել միջազգային հետազոտությունների արդյունքների հրապարակման գործընթացին միջազգայնորեն ճանաչված պարբերականներում:

## **Նպատակ 2՝ Ուսանողների և դասախոսների շարժունության բարելավում, միջմշակութային փոխշփման նպաստավոր միջավայրի ստեղծում**

Խնդիր 2.1 Ամառային դպրոցների և վերապատրաստումների կազմակերպում՝ ուղղված թե՛ օտարերկրյա, և թե՛ սփյուռքահայ ուսանողներին

2.1.1 Վերհանել միջազգային ասպարեզում տեղի ունեցող կրթական գործընթացների հիմնական միտումները, արդիական թեմաները, ՀՊՄՀ-ի ուժեղ կողմերը և ստեղծել համապատասխան ծրագրեր օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողներին ներգրավելու նպատակով

2.1.2 Մշակել և համապատասխան թիրախային խմբերին առաջարկել հայագիտական և հայաստանյան մշակութային արժեքները խթանող ծրագրեր օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների և հետազոտողների համար

2.1.3 Մշակել համապատասխան մարքեթինգային ուսումնասիրությունների հիման վրա միջոցառումներ նորամշակ ծրագրերը խթանելու և թիրախային խմբին հասցնելու նպատակով:



Խնդիր 2.2՝ Համալսարանական անձնակազմի և ուսանողների շարժունության ապահովում

2.2.1 Մշակել օտարերկրյա ուսանողներին տրամադրվող կրթական ծրագրերի ամբողջական փաթեթներ, ներառյալ՝ կացությունը, ուսման վարձը, աջակցություն Հայաստանում ժամանակավոր կացություն ստանալու համար, ծառայություններ ուսուցառման ընթացքում և այլն, 2.2.2 Ստեղծել ՀՊՄՀ-ի օտարերկրյա ուսանողների, ժամանակավոր ուսումնառության նպատակով այցելող ուսանողների ցանց՝ հետազայում կապը պահպանելու, հետադարձ կապի միջոցով ՀՊՄՀ-ի կրթական ծառայությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և ՀՊՄՀ-ի առաջարկները ցանցի միջոցով տարածելու նպատակով,

2.2.3 Պարբերաբար կազմակերպել տեղեկատվական սեմինարներ՝ ՀՊՄՀ-ի ուսանողներին միջազգայնացման խնդիրների, գործող փոխանակման ծրագրերի վերաբերյալ լուսաբանելու նպատակով, 2.2.4 Ստեղծել տեղեկատվության տարածման գործուն ուղիներ՝ արտասահմանում սովորելու վերաբերյալ ՀՊՄՀ-ի ուսանողների միջև տեղեկատվության տարածման նպատակով,

2.2.5 Ստեղծել նախադրյալներ՝ ՀՊՄՀ-ում նախկինում ձեռքբերած կրթության ճանաչման մեխանիզմների և գործիքակազմի մշակման համար:

**Նպատակ 3՝ ՀՊՄՀ-ի արտաքին կապերի ընդլայնում Խնդիր 3.1՝ Համագործակցային ցանցերի ստեղծում՝ թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակներում**

3.1.1 Ստեղծել համագործակցային սերտ կապեր ազգային մակարդակում գործող միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՊՄՀ-ի ռազմավարական խնդիրների և առաքելության հետ առնչվող հարցերի վերհանման, քննարկման, համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով,

3.1.2 Ավելացնել այլ աղբյուրներից ֆինանսավորվող միջազգային համատեղ ծրագրերը, 1.3 Նպաստել Եվրոպական համալսարանների ասոցիացիային

անդամակցելու համար նախապայմանների ստեղծմանը, 3.1.4 Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ:

**Նպատակ 4՝ Միջազգայնացման ռազմավարության իրագործման, մշտադիտարկման և միջազգայնացման գործընթացների բարելավում** Խնդիր 4.1 ՝Աջակցություն համալսարանական անձնակազմին միջազգայնացման խնդիրների լուծմանը մասնակցելու և բուհական միջազգայնացումը խթանելու հարցում

4.1.1 Ստեղծել առանձին ստորաբաժանումների միջազգայնացման աշխատանքների համար պատասխանատու մասնագետների ցանց՝ ՀՊՄՀ-ի միջազգայնացմանը կառուցվածքային ստորաբաժանումներին ներգրավելու նպատակով ,

4.1.2 Կազմակերպել ամենամսյա տեղեկատվական սեմինարներ միջազգայնացման պատասխանատուների համար՝ միջազգայնացման գործող խնդիրների, առաջխաղացման ուղիների, միջազգայնացման վերաբերյալ առաջարկները քննարկելու և տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով,

4.1.3 Կազմակերպել ընդհանուր քննարկումներ ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի հետ ՀՊՄՀ-ի միջազգայնացման հարցերի վերաբերյալ,

4.1.4 Ներգրավել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին միջազգային համագործակցային ծրագրերում՝ ըստ մասնագիտական փորձի և համապատասխան հմտությունների առկայության:

Խնդիր 4.2՝ Միջազգայնացման կառավարման գործընթացի բարելավում Սույն ռազմավարության իրագործման, մշտադիտարկման և միջազգայնացման գործընթացների բարելավման նպատակով.

4.2.1 Կազմակերպել քննարկումներ ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան ներկայացուցիչների հետ՝ իջազգայնացման ռազմավարության ներդրման հետ կապված խնդիրների վերհանման և լուծման ուղիների որոնման վերաբերյալ,

4.2.2 Մշակել համապատասխան գործիքակազմ ՀՊՄՀ-ի միջազգայնացման ուղղությամբ տարվող գործընթացների և աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով,

4.2.3 Մշակել ՀՊՄՀ-ի միջազգային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգ՝ միջազգայնացման աշխատանքները համակարգելու նպատակով,

4.2.4 Ամփոփել գործունեության արդյունքները յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ըստ ՀՊՄՀ-ի միջազգայնացման ռազմավարության խնդիրների և մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր լավագույն փորձի տարածման և թերությունների շտկման նպատակով: